ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/213

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Դիլիջանի համայնքապետարան

Մասնակից՝ «Զեթ իննսուն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Զեթ իննսուն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Զ. Մատինյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցում, համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (բաց կամ ծածկով մակատեղ, հովվի կացարան) կառուցապատման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14149-2020 գրությամբ «Զեթ իննսուն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Դիլիջանի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 14.09.2020թ.-ի թիվ 1344 գրության հիման վրա, 18.09.2020թ.-ին «Զեթ իննսուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.09.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 18.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/213 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

25.09.2020թ.-ին և 02.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.10.2020թ.-ին:

2. Դիլիջանի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Դիլիջանի համայնքապետարանը 14.09.2020թ.-ի թիվ 1344 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջների համապատասխան, ներկայացրել է «ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Զեթ իննսուն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «Զեթ իննսուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 07.09.2020թ.-ի գրությամբ դիմել է «Զեթ իննսուն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14149-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է նաև գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««Զեթ իննսուն» ՍՊԸ-ն շահել է Դիլիջանի համայնքապետարանի և «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից հայտարարած «ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20-2» ծածկագրով մրցույթը: Քանի որ ծրագրի արժեքը գերազանցում էր 10 միլիոն դրամը, ապա կազմակերպությունը պետք է ներկայացներ բանկային երաշխիք: Շատ լավ իմանալով սա, ՍՊԸ-ն նախատեսել էր նաև անշարժ գույքի տեսքով գրավը, որի դիմաց բանկը պետք է տրամադրեր բանկային Երաշխիքը: «Զեթ իննսուն» ՍՊԸ-ն գրանցվել է 2020 թվականի մայիսի 11-ին: Լսելով ՀՀ կառավարության կոչը և տեսնելով հանրապետությունում իրականացվող շինարարական աշխատանքների ծավալը, ստեղծել ենք կազմակերպությունը՝ ցանկանալով արարել ու ստեղծել ինչպես մեր հայրենիքի, այնպես էլ մեզ համար, բացել նոր աշխատատեղեր և խիստ տրամադրված լավ աշխատանքի՝ մասնակցել ենք մրցույթին:

Սակայն գուցե իմ բացթողումն է, որ չգիտեի բանկերի այս ոլորտում իրականացվող քաղաքականության մասին: Չէի կասկածում, որ համապատասխան գրավի առկայության դեպքում, բանկերը կմերժեն տրամադրել երաշխիք՝ պատճառաբանելով սկսնակ լինելու հանգամանքը: Ի դեպ նշեմ, որ սկսնալ լինելու և ցանկացած խոչընդոտ հաղթահարելու պատրաստ լինելու երիտասարդական արյունն է ստիպել ինձ դիմել այս մրցույթներին, քանի որ իրականացվող շինարարությունը սարերում է, դժվարամատչելի ճանապարհների առկայության պայմաններում, և շինարարական կազմակերպությունները սովորաբար խուսափում են նման աշխատանքերից:

Խնդրում եմ հաշվի առնելով հանգամանքը, որ գրավի առկայության պարագայում բանկերն են մերժել տրամադրել բանկային երաշխիք՝ պատճառաբանելով սկսնակ լինելու պարագան, և այն, որ կազմակերպությունը մեծ ցանկություն ունի աշխատելու «Զեթ իննսուն» կագմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չընդգրկել՝ այսպես կոչված «Սև ցուցակ» չգցել:»:

4. <u>ՍՑ-LO-2020/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Դիլիջանի համայնքապետարանի կողմից համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (բաց կամ ծածկով մակատեղ, հովվի կացարան) կառուցապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.07.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Զեթ իննսուն» ՍՊԸ-ն:

iii. «Զեթ իննսուն» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Զեթ իննսուն» ՍՊԸ-ին:

v. 30.07.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

vi. Հանձնաժողովի 21.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Զեթ իննսուն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

vii. Դիլիջանի համայնքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 14.09.2020թ.-ի թիվ 1344 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14149-2020 գրությամբ «Զեթ իննսուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Դիլիջանի համայնքապետարանի կողմից համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (բաց կամ ծածկով մակատեղ, հովվի կացարան) կառուցապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.07.2020թ.-ին հայտարարված «ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության հիման վրա «Զեթ իննսուն» ՍՊԸ-ն 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից և վերջինիս ներկայացվել է «ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/20» ծածկագրով պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի 21.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Զեթ իննսուն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

Դիլիջանի համայնքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 14.09.2020թ.-ի թիվ 1344 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 21.08.2020թ.-ին՝ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները Պատվիրատուին չներկայացնելու հիմքով, սակայն Դիլիջանի համայնքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 14.09.2020թ.-ի թիվ 1344 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական

փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրահիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը

նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14149-2020 գրությամբ «Զեթ իննսուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/213 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**